

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2017թ. օգոստոսի 31 -ի

նիստի /արձ.1/

1. ԵԹԿՊԻ-ի բակալավրի կրթական ծրագրով 2017թ. առկա ուսուցման ընդունելության վերաբերյալ Գ. Ստեփանյանի զեկույցն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել և ա.թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ դնել ԵԹԿՊԻ-ի 2017-2018 ուս. տարվա հաստիքացուցակը,
  - 2.1 Ելնելով տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության առկա ժամաքանակից պրոֆեսորադասախոսական անձնակազմի և նվազակցողների շաբաթական աշխատաժամանակի տևողությունը 2017 թվականի սեպտեմբերի 1-ից սահմանել ըստ ներքոհիշյալ աղյուսակի.

N	ուսումնական ծանրաբեռնվածությունը	շաբաթական աշխատաժամանակը
1.	700-1080	36 ժամ
2.	600-699	27 ժամ
3.	500-599	18 ժամ
4.	450-499	16 ժամ
5.	400-449	14 ժամ
6.	350-399	12 ժամ
7.	300-349	10 ժամ
8.	200-299	8 ժամ
9.	100-199	6 ժամ
10.	50-99	4 ժամ
11.	մինչև 49	2 ժամ

3. Երաշխավորել Զարուհի Ներսեյանի «Բեմական խոսքի տեխնիկա» վերնագրով մեթոդական ուղեցույցը տպագրության: Ուղեցույցը տպագրել 99 օրինակով,

3.1 հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին ներկայացնել տպագրական ծախսերի նախահաշիվը, սահմանված կարգով կազմակերպել տպագրության գործընթացը և այն ավարտել դեկտեմբերի սկզբին:

4. Ելնելով ինստիտուտի ֆինանսական ոչ բարվոք վիճակից, հաստատել ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. օգոստոսի 30-ի նիստի ներքոհիշյալ որոշումը՝

4.1 ա.թ. սեպտեմբեր ամսից ԵԹԿՊԻ-ի ռեկտորի օգնության ֆոնդից հատկացվող սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանել 60 000 դրամ,

4.2 սոցիալական օգնության դիմումները քննարկելու, դրամական օգնությունների հատկացման չափը որոշելու նպատակով ռեկտորին կից ստեղծել հանձնախումբ հետևյալ կազմով՝

-Եղիազարյան Վահան (պրոռեկտոր)

-Նալբանդյան Հենրիետա (գլխավոր հաշվապահ)

-Բերոյան Նարինե (արհկոմի նախագահ)

-Մանասերյան Էլեն (իրավախորհրդատու)

-Հարությունյան Հարություն (ՈԻԽ նախագահ)

4.3 ա.թ. սեպտեմբերից դադարեցնել ինստիտուտի աշխատակիցների հոբելյանների կապակցությամբ հատկացվող գումարային պարգևատրումները,

4.4 «ԵԹԿՊԻ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի 3-րդ բաժնի 3.7 կետի (ժ) ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Նույն բուհում վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին - 20 %»:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան

**ՈՐՈՇՈՒՄ**

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ  
ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԵԹՎՊԻ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի 3-րդ բաժնի 3.7 կետի (ժ) ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Նույն բուհում վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին - 20 %»: